



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

«Պատմական հուշարձանների և կուլ-
տուրական մյուս արժեքների պահպա-
նության նկատմամբ հոգածարությունը
Հայկական ՍՍՀ հաղթացիների պարտ-
քը ու պարտականությունն է»:


(ՀՍԽՀ սահմանադրություն, հոդված 66)

Տեսքը առևմտյան կողմից



Պատմական Արագածոտն գավառը հա-
րուստ է ճարտարապետական մեծարժեք
հուշարձաններով: Կրանց թվին է պատ-
կանում Մաստարայի ու Հովհաննես եկե-
ղեցին (Հայկական ՍՍՀ Թալինի շրջանի
համանուն զյուղում): Այն գլխավորում է
կենտրոնագմբեթ, արտաքուստ և ներ-
քուստ խաչաձև եկեղեցիների խումբը,
որի մեջ մտնում էն Արթիկի մեծ, Հա-
ռինավանքի ու Գրիգոր, Ռոկեպարի ու
Սարգիս և Կարսի ու Առաքելոց (X դ.)
եկեղեցիները:

Գմբերի և բժին տեսքը




Այս տիպի տաճարների մի այլ տարբերակ կարելի է համարել թագարանի տաճարը (VII դ. առաջին կես), որում, ի տարբերություն Մաստարայի տաճարի, էջմիածնի Մայր տաճարի նմանությամբ աղոթարանի կենտրոնում մուժված են գմբեթակիր շորս մույթեր՝ կազմավորելով գմբեթային փոխանցման միանգամայն տարբեր կոնստրուկտիվ համակարգ:

Վիմագրական հինգ արձանագրություններից մեկում որպես կառուցել տվող հիշատակված է Գրիգորան վանականի անունը, մյուսում՝ նշվում է եկեղեցու 891 թ. վերանորոգման մասին: Տաճարի թվագրման հարցում կան տարակարծություններ (V-VI կամ VI-VII դդ.), ոմանք էլ այն կարծիքին են, որ տաճարը կառուցվել է VII դ. պահպանելով տեղում գտնվող հին եկեղեցու մասերը: Հիմք կա վերջինը ավելի հավանական համարելու:

Մաստարայի տաճարի հատակագծային չորինվածքը սերվում է էջմիածնի Մայր տաճարի ձևերից: Իր ներքին և արտաքին պարագծերով այն խաչաձև է: Խաչթևերը կազմավորում են կիսաշրջան խորանները, որոնք բացի արելլյանից (որի երկու կողմից համելված են ավանդատներ), մնացած ճակատների նկատմամբ դուրս են շեշտված իրենց հնգանիստ ծավալներով: Էջմիածնի Մայր տաճարի համեմատությամբ Մաստարայի տաճարի էական տարբերությունը կայանում է զբարեթակիր շորս մույթերի բացակայության մեջ: Դրա շնորհիվ, ինչպես գմբեթավոր դահլիճ-տիպի եկեղեցիներում, աղոթարանը անաղճատ է, ընկալվում է իր ամրողական ծավալով:

Գմբեթակիր մույթերից հրաժարվելը թերաղրել է կիրառել աղոթարանի ժամանակամայն նոր, առավել բարդ կոնստրուկտիվ լուծում: Այն իրականացված է հենելով ժամկեր որպես հենախորշեր ժառայող կիսաշրջան խորանների



Արևմտյան մուտքը և լուսամուտը



Արևմտյան պատի արձանագրությունը



Տնօհնանուց տեսքը հարավ արևելքից



Խոսամուտ արևմտյան պատին

ճակատային կտմարների, արտաքին պատերի և առկյուններում տեղավորված լայնաթուիչը տրոմպների վրա։ Հենարանների այդպիսի հստակարգի վրա բարձրացող ութանկյուն թմրուկը ստացվել է մարմնագույն առաջնական տեսքում՝ մուծելով որմնախորշեր (Գառնահովտի տաճարի նմանությամբ) ձգտել է ըստ հնարավորին մեղմացնել թմրուկի ժանրության տեսողական սպառությունը։

Բազարանի տաճարում, շնորհիվ գմբեթակիր մույթերի առկայության, գմբեթի թմրուկն ու գմբեթը ավելի հավաք ժամանակին ձևավաշը ներդաշնակելով նրա ժամանակակից առաջնական դաշտավայրը դաշտավայր է հայության մեջ, հանդիսանալով նրա լավագույն երկերից մեկը։

Մաստարացի գյուղի տարածքը հարուստ է նաև հնագիտական և ճարտարապետական այլ հուշարձաններով, որոնցից առանձնապես հիշատակելի է գյուղի հյուսիսարևելյան մեջ, հանդիսանալով նրա լավագույն երկերից մեկը։

Միշոցները հարահատ են վաղ միջնադար յան հայ ճարտարապետության ոգուն։ Դրանց թվին են պատկանում հարավային և արևմտյան շքամուտքերի (վերանորոգումների հետեւնքով որոշ շափով աղավաղված), ճակատներին ու թմրուկի նիստերին տեղավորված լուսամուտների պատկերը (արևմտյանը երիզված է նաև ինքնատիպ երեսակալով), ճակատները և թմրուկը պատկեր կամարիկավոր բիվերը։

Սակայն այդ զուսպ կիրառված ճարտարապետական տարրերը զեն, որ ստեղծում են տաճարի ընդհանուր առմամբ պարզ ու պատկառազգու արտաքին նկարագիրը։ Հուշարձանի գլխավոր արժանիքը նրա ինտերիերն է (ներքին տեսքը), և իհարկե, արտաքին հուժկու, միաձուլված ու ստվերով հարուստ ժամանությունը։

Մաստարացի տաճարը ցայտուն օրինակ է այն բանի, թե ինչպես հին Հայաստանի ճարտարապետները լրավարարվելով ձեռք բերված նվաճումներով, անդադրում ստեղծագործական որոնումներ էին կատարում կենտրոնագմբեթ եկեղեցիների նոր տարրերակներ, ծածկերի համապատասխան կոնստրուկտիվ լուծումներ ըստ զեելու ուղղությամբ։ Այդ հատկանիշներով Մաստարացի տաճարը իր արժանիքներն է գրավում վաղ միջնադարյան հայ ճարտարապետության մեջ, հանդիսանալով նրա լավագույն երկերից մեկը։

Մաստարացի գյուղի տարածքը հարուստ է նաև հնագիտական և ճարտարապետական այլ հուշարձաններով, որոնցից առանձնապես հիշատակելի է գյուղի հյուսիսարևելյան ժայրամասում մի ժայռածերպի վրա կանգնեցված մեծաչափ ու հոյակապ զարդանախշերով զրվագված խաչքարը (XIII դ.)։



Մաստարա. Խաչքար

Հարուրյունյան Վաշաղյան Մարտիրոսի
ՄԱՍՏԱՐԱՅԻ ՏԱՀԱՐ

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի
հուշարձանների պահպանության ընկերու-
թյուն

Մասն. խմբագիր՝ Գ. Ա. Շախելյան
խմբագիր՝ Ս. Վ. Ստեփանյան
Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Ասցյան
Վերստուգող սրբազրի՝ Գ. Հ. Ղազարյան

Հանձնված է շարժածքի 21.07.1986 թ.
Ստորագրված է տպագրության
14.07.1987 թ.: Ֆորմատ՝ 84×108¹/₃₂
Թուղթ՝ «Կավճապատ», տպագր. 0,42
պայմ. մամ., հրատ.՝ 0,4 մամ.: Պատվեր
788: Տպարանակ 10000: Գինը 15 կուգ.:
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրա-
ֆիայի և գրքի առևտորի գործերի պետա-
կան կոմիտեի № 2 տպարանի մասնաճյուղ,
Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. № 26: